ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՆԱԴ-9/19
Սուբսիդիա տրամադրելու մասին

ք. Երևան «04» «փետրվար» 2019թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Խաղային մարզաձևերի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ը (այսուհետև՝ Կատարող), ի դեմս կազմակերպության տնօրեն Գ. Ալեյանի, մյուս կողմից, հիմք ընդունելով «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» «ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշումը՝ ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն պայմանագրով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված 09.05.01. «02. Արտադպրոցական դաստիարակություն» ծրագրով 68392700 (Վաթսունութ միլիոն երեք հարյուր իննսուներկու հազար յոթ հարյուր) ՀՀ դրամի սուբսիդիա է տրամադրվում հաստատությանը՝ միջին տարեկան 989 երեխայի դաստիարակությունը կազմակերպելու համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1.Պատվիրատուն իրավունք ունի.

2.1.1.Վերահսկել կատարողին հատկացված դրամական միջոցների օգտագործման արդյունավետությունը,

2.1.2.Պահանջել կատարողից ներկայացնել եռամսյակային հաշվետվություններ սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետներում,

2.1.3.Կատարողից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին:

2.2.Կատարողն իրավունք ունի.

2.2.1. Պատվիրատուից ստանալու ՀՀ պետական բյուջեից հատկացվող գումարը սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում և կարգով:

2.3.Պատվիրատուն պարտավոր է.

2.3.1. Կատարողին ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օժանդակություն և աջակցություն.

2.4. Կատարողը պարտավոր է.

2.4.1. Երեխաների դաստիարակությունը իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով և ծևով.

3. ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1.Պատվիրատուն սույն պայմանագրի 1-ին կետում նշված գումարը «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն փոխանցում է Կատարողի գանձապետական հաշվին համամասնորեն՝ ամսական կտրվածքով՝ ոչ ուշ, քան տվյալ ամսվա 10-ը:

4.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1.Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ-ՀԱՆՁՆՈՒՄ

5.1.Սույն պայմանագրով նախատեսված ծառայության ընդունումը կատարվում է համաձայն հանձնման-ընդունման ակտի՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը:

6.ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1.Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այդ իրավիճակը ստեղծվել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են. բնական աղետները, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ իրավիճակի հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

7.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1.Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում ստորագրման պահից, գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2.Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կամ համաձայնագիր /համաձայնագրեր/ ձևակերպելու միջոցով: Վերջիններս կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագիրը կազմված 2 էջից և հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կրթության և գիտության նախարարություն

ք. Երևան, Կառավարական 3 շենք

ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն

Հ/Հ900011005445

ՀՎՀՀ 02512868

Գլխավոր քարտուղար՝

Ն. Հարությունյան

/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Խաղային մարզաձևերի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ

ք. Երևան, Աճառյան 20

ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900018005513

ՀՎՀՀ 01507172

Տնօրեն՝ Գ. Ալեյան

/ստորագրություն/ Կ.Տ